

Եթէ մեր նախնիք ըստ ժամանակի հասկացողութեան աւելի աղօթատեղիների և աղօթողների կարիքն էին զգում, այժմ մեզ հարկաւոր են և՛ աղօթատեղիք և՛ աղօթաւորներ և՛ գործող մարդիկ ու գործ:

Ում շատ է տրուած՝ նորանից էլ շատ կը պահանջուի:

Հենց այդ պահանջին անսալով է, որ մենք կարող պիտի լինինք ապահովելով նիւթական եկեղեցին՝ ապահովել բանաւոր եկեղեցու գոյութիւնն ու ազգայնութիւնը: Ով որ գիտէ, բայց չի կատարում՝ կրկին պատժոյ արժանի է:

Հիգգ չըլինինք մեր պարտաւորութեանց մէջ:

Յ. Վ. Ա.

# Ք Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԲԷԼԻ.

( Երբեք չի կարելի ըստ մեր արարածի և մեր արարածի մասին )

### ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Գ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԿԱՅԻՆ.

Ե՛կ մահ, եկ ապականութիւն . . . , Գազաններն և սողունները ինձանից երջանիկ և զուարթ են, այս ի՞նչ թշուառութիւն, ի՞նչ անպատուութիւն է, Արեւի զօհն ընդունեց Աստուած, երկնքից կրակ իջաւ վառեց, որի անուշահոտութիւնը բոլոր աշխարհ տարածուեց, իսկ իմ զօհս չընդունեց. սաստիկ փոթորիկը բոլոր պտուղները ցրուեց լեռների և դաշտերի մէջ. գարշահոտութիւն սփռուեց երկրի վերայ: Ի՞նչ է իմ յանցանքս՝ որ մարդիկ ինձ ատում են, հրեշտակները ինձ արհամարհում են, իսկ Աստուած խայտառակում ու պատժում է. բոլոր բնութիւնը իմ դէմն զէնք է առել. ամենի երեսները միշտ զուարճութեամբ են պայծառանում, իմ համար ամենայն ինչ տրտմութիւն է և տխրութիւն, որովհետեւ նոցա այդ ուրախութիւնը կարծես ինձ յանդիմանելու համար են միայն, Երեկոյեան անկողին եմ մտնում զառն տրտմութեամբ, առաւօտը զարթնում եմ անմխիթար ոգով, մին-

չև իսկ երազները տանջում են ինձ զարհուրելի երեւոյթներով: Քունը՝ որ բոլոր արարածոց համար հանգստութեան պարգև է, իմ համար պատիժ է և անհանգստութիւն: Անկերական կեանքն մինչև անգամ անասնոց է ցանկալի, իսկ իմ համար ատելի է գարձել: դաշտի գաղանաց պէս միշտ սիրում եմ առանձնութիւն: Անիծեալ լինի այն որը երբ ծնուեցի . . . (նստումէ քարի վերայ) ո՞վ քուն, գէթ այստեղ խաղաղութեամբ բարեկիր ինձ. աւելի սիրում եմ մթութեան և սուտ երազոց անձնատուր լինել քան արթնութեամբ տանջուել: Երանի՛ թէ մշտնջենաւոր քուն մի տիրէր ինձ և բնաւ չըզարթնէի . . . ո՛հ, բոլոր անգամներս թուլացել են: (ննջում է):

## ՏԵՍՈՐԱՆ Բ.

## ԱՆԸՄԷԼԷՒՒՔ.

Վերջապէս գտայ Պայինին, սա շատ յարմարաւոր գործիք է իմ հնարքներս գործադրելու: Ինչ յարմարադրին միջոց, ահաւասիկ թանձր քուն մի պատել է իրան, ես էլ սորա մօտն ընկողմեմ (պարկումէ Պայինի մօտ. մի ձեռը դնումէ Պայինի աչքի վերայ, իսկ միւսն սրտի վերայ), եկէք ինձ օգնել, դժոխային երազներ, խօլական անուրջներ: Յրուեցէք, խանգարեցէք սորա, խելքն ու միտքը. շփոթեցէք սորա երեւակայութիւնն, կատաղեցրէք վրէժխնդրութեան, ատելութեան և նախանձու ոգին գեպի Արէլը. այնպէս մի երազ ներկայացրէք սորան՝ իրրե թէ մի լայնածաւալ դաշտի մէջ արեգական տար ճառագայթների տակ իւր որդիքն ու թոռները իրանից աւելի խիստ աշխատութեան և քրքտանց մէջ են, և ամենայն կողմից իրան անիծող ձայներ լսելի արէք սորան, և իւր թոռներից ոմանք ևս Արէլի թոռանց գերի: իսկ ընդհակառակն ցոյց տուէք Արէլի որդիքն և թոռունք՝ որ ուրախ, զուարթ՝ գեղեցիկ պարտեզներու մէջ կարկաջահոս աղբիւրների վերայ, հանգիստ վայելում են բնութեան բարիքն և օրհնում են Արէլին: Թող այսպիսի երազներով գրգռուի նորա բարկութիւնն Արէլի վերայ և սկսի վրէժխնդրութեան, ատելութեան և նախանձու ոգին կատաղել իւր մէջ: (ետև նայելով ու յետ դառնալով) բայց ահա եկաւ Արէլ, ի՞նչ յարմարաւոր ժամ, այժմ փափագս կատարվում է, թող գայ Արէլ՝ հրեշտակաց բարեկամն, իւր բաղդը որոնելու (հեռանումէ):

## ՏԵՍՄՐԱՆ Գ.

## ԱԲԷԼ ԵՒ ԿԱՅԻՆ.

## ԱԲԷԼ.

(Պայինի վերայ նայելով) Ո՛հ, ե՞րբ արդեօք պիտի զարթնի եղբայրս, որ ուրախ ողջունեմ, գրկեմ և մխիթարեմ. բայց ո՞ գիտէ, ի՞նչ սարսափելի երազներով պաշարուած է, որ քնոյ մէջն անգամ ճակատը

կնճռած է և գէմքի գծագրութիւնը բոլորովին տիրութեան մէջ է երեւում, գնամ, հեռանամ. մի գուցէ . . .

ԿԼՅԻՆ.

(Յանկարծ զարթնումէ առանց Աբէլին նայելու կատարարար կանչումէ վազելով այս ու այն կողմ), Պատուութիւր երկիր, կուլ տուր ինձ. վայ ինձ. անիծեալ լինի այն օրն, անիծեալ լինի այն ժամը, երբ ես ծնուեցի, երբ արև տեսայ, երբ զոհեցի, երբ խայտառակուեցի. (ոտքը դեմին զարկելով) պատուութիւր երկիր, կուլ տուր ինձ, չըտեսնեմ իմ որդւոց և թոռանց թշուառութիւնը, չըտեսնեմ նոցա գերի լինել Աբէլի սերնդոց . . . Երկինք, լեռներ, փուլ եկէք իմ վերայ, ճմլեցէք ինձ ձեր տակ:

ԱԲԷԼ.

(Գողալով) Եղբայր իմ Կային . . . ո՛հ ի՞նչ եղաւ քեզ, եղբայր իմ . . .

ԿԼՅԻՆ.

Խորամանկ օձ, այս տեղ ես հա՞, հեռացի՛ր:

ԱԲԷԼ.

(Կամենալով Կայինի ոտքն ընկնել) Ներիւր եղբայր իմ . . .

ԿԼՅԻՆ.

Օձ, ոտների՞ս ես փաթածվում, (փայտով զարնումէ Աբէլի գլխին, որ գետին է փռվում ուշաթափ, Կային սոսկալով յետ է քաշվում ձեռքի փայտն գետին ձգելով) ո՛հ, այս ի՞նչ եղաւ. (բռնցքով իւր գլխին զարկելով) անիծեալ հարուած, (գողալով մօտենումէ Աբէլին, գլուխը գետնից վերցնումէ) Աբէլ . . . եղբայր իմ Աբէլ . . . ի՞նչ եղար, եղբայր իմ . . . զարթնի՛ր . . . ո՛հ, ի՞նչպէս դեղնեց, աչքեր խփուեցին . . . ո՛վ սոսկալի տեսիլ . . . ի՞նչպէս գլուխն արեան մէջ ծփումէ . . . Աբէլ . . . եղբայր իմ Աբէլ . . . արթնացի՛ր, (մօտենումէ և շարժում) Աբէլ, վեր կաց . . . ո՛հ, մեռա՛ւ, այս է մահ . . . մեռա՛ւ ինչպէս ողջակէզ գառն . . . փախչեմ ես . . . բայց ո՛ր . . . փութացէք թուլացած ծունկներս. փախչեմ անտառների մէջ կորչեմ, գաղանների հետ ապրեմ, գուցէ և նոցա կերակուր լինեմ . . . ո՛վ սոսկալի փիճակ, (միշտ յետ յետ դառնալով հեռանումէ):

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀՐԵՇՏԱԿ.

Աբէլ, եկ խառնուի՛ր մեզ հետ Աստուծուն փառաբանելու, դու մեկ պակասն լրացնելու համար ես ստեղծուած. (Կային մանումէ):

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԿԱՅԻՆ ԵՒ ՀՐԵՇՏԱԿ.

ԿԱՅԻՆ.

(Առանց հրեշտակին տեսնելու) Ո՛ւր փախչեմ, ո՛վ սարսափելի ոճիր, հեռացէք դողդոջուն ստներս, հեռացէք այս սոսկալի տեսարանից, (կրկին կամենումէ հեռանալ, հրեշտակը արգելումէ):

ՀՐԵՇՏԱԿ.

Ո՛ւր ես փախչում դահիճ. խիղճդ ու Աստուած դատախազ են քեզ, Աստուծուց փախչել ես կամենում, դարձիր կրկին դէպի Աստուած և պատասխան տուր, ո՛ւր է քո Աբէլ եղբայրը:

ԿԱՅԻՆ.

(Շվարած և կակաղելով). Չըգիտեմ, միմէ թէ ես, նորա պահպանն եմ:

ՀՐԵՇՏԱԿ.

Չըգիտե՞ս, եղբորդ արիւնը բողբոջեց Ամենակալի աթոռի առաջ, Անիծեալ լինիս երկրի վերայ, որ ձեռքովդ եղբորդ արիւն թափեցիր. աշխատես՝ բայց աշխատութեանդ պտուղը չուտես, քո բոլոր կենաց մէջ երերեալ տատանեալ լինիս: Այսպէս վճռեց յաւիտենական անխաբ Պատաւորն. (աներևութանում է):

ԿԱՅԻՆ.

(Սկսումէ սաստիկ դողալ). Ո՛հ ի՞նչ եղայ ես, այս ի՞նչ անսովոր քրտինք ողողեց ինձ. դողումեմ, սիրտս տրոփումէ, կարծես թէ երկինք, գետին, մարդ և անասուն և նոյն իսկ իմ ստուերն ինձ հալածումեն. անիծեալ բազուկ . . . անիծեալ երազ, անիծեալ հարուած . . . Ո՛հ, ահա եկան Ազամ ու Եւայ, ո՛ւր փախչեմ ես, ո՛ւր կորչեմ ես. (Հեռանումէ):

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱՅ.

ԵՒԱՅ.

Ո՛հ, ի՞նչ է այս, Աբէլն ի՞նչ անսովոր կերպով փռուել է գետնի վերայ, ո՛հ . . . (ուշաթափումէ):

ԱԴԱՄ.

Վայ ինձ, արիւն է հոսում ճակատից . . . (չոքումէ Աբէլի մօտ) որդեակ իմ . . . Աբէլ. ի՞նչ է քեզ եղել, այս է մահը. սոսկալի ժամ. (ուշաթափումէ, Վային մտնումէ):

ԿԼՅԻՆ.

Ո՛հ, տակաւին Աբէլը շարժենց, անիծեալ հարուած. չորանօր բազուկս, ան դառն նախանձ. (հեռանումէ):

ԱԴԱՄ.

(Ուշքի գալով) Աային, ի՞նչ եղար, ո՞ւր գնացիր. աւաղ թշուառիս, Աային սպանեց Աբէլին. Աբէլն սպանուած է, ո՛հ, ո՞ւր եմ ես, երազ արգեօք, վայ և եղճակ ինձ. (ընկնումէ Աբէլի վերայ):

ԵՒԱՅ.

Ուշքի գալով (վերցնումէ գլուխը). Ադամ, Ադամ, վեր կաց, ձայն տուր Աբէլին, Աբէլ, որդեակ իմ, արժնիր . . .

ԱԴԱՄ.

Ի՛նչ ցաւոց անդնոց մէջ խորասուզուեցիրք. երանի թէ ծնած չըլինէիք եղ Աային, ծնած օրդ խաւարէր. արև չըտեսնէիր, (Հրեշտակը մտնումէ):

ՏԵՍԱՐԱՆ Ի.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՀՐԵՇՏԱԿ,

ՀՐԵՇՏԱԿ.

Ինչո՞ւ էք լալիս անմիտութար. մի սգաք, անմահ հոգիների և արդարների համար սուգ պէտք չէ. մահը ոչինչ չըկարողացաւ անել, այլ միայն քանդեց նորա մարմնեղէն բնակարանը, դուրս հանեց պայծառ հոգին, որպէս զի մեզ հետ Աստուծուն միշտ օրհնէ. դուք ևս հետզհետէ նորա մօտ պիտի գաք, Լսիր, Ադամ, այսպէս է հրամայում յաւիտենական Բարութիւնը, հողը հող պէտք է գառնայ. (աներևութանում):

ԱԴԱՄ.

Օրհնումեմ քեզ, երկնային բարեկամ, որ Աստուծոյ հրամանն մեզ յայտնումես: Աստուած իմ, որքան մեծ է Քո գթութիւնն ու անյիշաչարութիւնը, որ անպատում յուսով միտարումես մեզ. . . Առաջինն է այս, որ այսօր հոգին պիտի յանձնուի ըստ Աստուածային վճռոյ ի հող գառնալու:

ԵՒԱՅ.

Ո՛վ մայրական գութ, աղիքներս կտրտուելով բերնիցս դուրս են թափվում. (ուշաթափվումէ, Թիրզայ և Միհայլայ մտնումեն):

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԱՌԱՋԻՆՔ, ԹԻՐՉԱՅ ԵՒ ՄԻՀԱԼԱՅ.

ԹԻՐՉԱՅ.

Ո՛հ, ի՞նչ է այս Միհայլայ. ո՛վ է գետին փռուածը, ո՞ւր եմ ես, Աստուած իմ, ի՛նչ սոսկալի երազ, Աստուած իմ, ո՞վ է այս գետին:

փռուածը, Արէլը, ինչ է պղտ, հայր իմ. ո՞վ է դա, մայր իմ, Արէլ, իմ ցանկալի Արէլ. . . Ո՞վ իմ երջանկութիւնս, ո՞վ իմ կեանքս, ո՞վ իմ լոյսս . . . ո՞հ, զարթնիր, իմ սիրելի Արէլ, իմ կենակից, լսիր, Թիրզան է քեզ ձայնողը, զարթնիր, Աստուած իմ, դու զարթեցուր:

ՄԻՀԱԼԱՅ.

Արէլ, իմ սիրելի Արէլ, ո՞հ . . .

ԱԳԱՄ.

( Լալոյվ ) Սթափուիւր Թիրզայ, սթափուիւր Միահալայ, անմահ հոգիների համար սուգ պէտք չէ:

ՄԻՀԱԼԱՅ.

Թո՛ղ որ լանք, Հայր իմ. դու, ո՞վ մեր մխիթարութիւն և ցնծութիւն Արէլ, ու՞ր գնացիր բաժանուեցիր, թողիր մեզ անմխիթար սուգի մէջ: Մեր գործը պիտի լինի այսուհետև ողբալ անդադար, Պային, ո՞ւր ես, արի տես, քո հարազատդ ինչպէս անշնչացած է իբրև գառն:

ԵՒԵՅ.

Ով չարածնո՞ւնդ Պային. Աստուծոյ, հրեշտակների և մարդկան ատելի Պային. գօսանար բազուկդ:

ՄԻՀԱԼԱՅ.

Ո՛հ, ի՞նչ եմ լսում գազանային սիրտ, դաժան Պային, եղբայրասպան Պային:

ԹԻՐԶԱՅ.

( Գլուխ վերցնելով Արէլի գիակի վրայից ). Ո՛հ, անիծեալ Պային, չարանային ձեռներդ:

ՄԻՀԱԼԱՅ.

Քո՛յր իմ Թիրզայ, մի անիծեր, քո և իմ հարազատն է. աղօթենք նորա յանցանքի թողութեան համար. աղաչումեմ, մի անիծեր, մեր անդրանիկ եղբայրն է, իմ փեսան է:

ԹԻՐԶԱՅ.

Ո՞ւր յափշտակեց ինձ աղէտիս դառնութիւնը, չեմ անիծեր իրան, ( Ընկնումէ Արէլի վերայ գոչելով ), Արէլ, ի՞նչպէս քո ընկած ժամանակ մօտդ չըզտնուեցի, որ քաղցրիկ ձայնդ վերջին անգամն էլ լսէի և իմ հոգիս էլ քո հետ փչէի. վայ ինձ, ինչո՞ւ կենդանի մնացի, կորցրի ամեն ունեցածս. ինձ այսուհետև ատելի եմ սոխակն ու վարդը, գառն և մաքի՛ն, լոյս և կեանք, Արէլ, անտերունջ մատաղ գառներիդ բառաջումն իմ հոգիս պիտի քաղէ, սուրբ սեղանոյդ դատարկութիւնը իմ ցաւերս պիտի նորոգէ և թաղմապատկէ, միշտ այս սոսկալի տեսարանս պիտի երևութանայ երևակայութեանս առաջ, միշտ պիտի տեսնեմ այս քաղց-

րահայեաց սիրակաթ բիրերդ անշարժ և խաւարած. այս մահուան  
գեղնութիւնը բոլոր մարմինդ խնկոյ գոյն դարձրած. շուշանագեղ դէմքդ  
և ճակատդ լերդացած արիւնով. նոնակեղև շրթունքդ և դալարագեղ  
բազկունքդ թարշամած և չորացած ինչպէս ծաղիկ՝ իւր ցօղունի վերայ  
խորշակից թառամած:

ԱԳԱՄ.

Ո՛հ, բաւական է Թիւրղայ, լսի՛ր հօրդ ձայնին:

ԹԻՐԶԱՅ.

Խաւարած աչքերս, արտասուաց կաթիլներ բղխեցէք սրտիս և սիրոյս  
բնակարանի քանդման վերայ, Լուացէ՛ք այս չորացած և լերդացած ա-  
րիւնը. ո՛ւր են այն քաղցրահայեաց բիրերդ, անուշակ ժպիտդ, սոխա-  
կանման գայլայլիկդ. ո՛ւր են, ի՞նչ եղան, ո՛ւր հեռացան. ո՛հ, բղխե-  
ցէ՛ք արտասուքներս, բղխեցէ՛ք. այսուհետև ինձ բաժին մնաց դառն  
սուգ, ողբ ու կոծ և արտասուք. ( ողբում է ),

Վայ, իմ կենաց քաղցրիկ ժամեր

Եւ ցնծութեանս պայծառ օրեր

Ի՛նչպէս շուտով անհետացան

Ինձ թողնելով այսպէս թշուառ:

Սուգ դառնութեան վշտեր և ցաւ

Եւ արտասուք ողբ՝ կոծ անբաւ:

Յաջորդեցին անտէր հիքոյս

Եւ խլեցին իմ ամեն յոյս:

ԵՒԱՅ.

Բաւական է Թիւրղայ, Միհայլայ. ձեր ողբ և կոծը հոգիս քաղում ե՛ս  
ձեր լացն ինձ յանդիմանութիւն է, որ պատուիրանագանցութեամբ  
մահ մտցրի աշխարհ:

ՄԻՀԱԼԱՅ.

Մայր իմ, մեր ողբն ու կոծը յանդիմանութիւն մի՛ համարիր, չենք  
կարող դէմ գնել ընտ. թեան:

( Ենօք մտնումէ ),

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԵՆՕՔ.

ԵՆՕՔ.

Մայր իմ Միհայլայ, Արեւն ինչո՞ւ է ընկած արիւնաշաղախ. սոս-  
կումեմ, ի՛նչ կերպարանափոխութիւն. ինչո՞ւ էք լալիս. մայրիկ, ի՛նչ  
արիւն է որ հոսումէ Արեւի գլխից, մի՛թէ զոհե՞լ էք և մի՛թէ գառնե՞լ  
չըկա՞յին զօհո՞ւելու:

## ՄԻՀԱԼԱՅ:

Մրդեակ իմ, Աստուծոյ անարատ և ընտիր զոհ է եղել Աբէլ, բայց վայ զոհողին . . .

## ԵՆՕՔ:

Աբէլն այլ ևս չըպիտի՞ զարթնի. ո՞վ մեզ երգ պիտի սորվեցնէ, ո՞վ մեզ ծաղիկ և պտուղ պիտի բերէ. (լալիս է):

## ԱԴԱՄ:

(Թիրզայի թեւը բռնելով քաշում է) Զարթիր Թիրզայ, զարթիր իմ սիրելի անզոյգ տատրակ, պէտքէ Աստուծոյ հրամանը կատարենք, հողին յանձնենք այս հողը, որ անմահ հոգւոյ բնակարան էր:

## ԹԻՐԶԱՅ:

(Սթափուելով) Ի՛նչ մխիթարութեամբ լի մի թմրութիւն պատեց ինձ. Աբէլ երկնային պայծառութեամբ ինձ մօտենալով զրկեց և ասաց. Թիրզայ, լաց մի՛ լինիր, ես երջանիկ եմ, և դու էլ ինձ մօտ պիտի գաս, որ իմիասին Աստուծոյ փառաբանութեան երգը երգենք. Թո՛ղ հայր իմ, վերջին մխիթարութիւնս առնեմ, յաւիտենական քնոյ մէջ Աբէլի հետ Աստուծոյ փառաբանութեան երգն երգելու և ի միասին անպատում խնդութեամբ զուարճանալու. Ուր Աբէլ, այնտեղ և Թիրզայ, անբաժան Աստուծոյ արևը վայելեցին, անբաժան պէտք է շիրիմ մանեն հող դառնալու. (Աբէլի դիակի մօտ անշընչանում է):

## ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱՅ:

(Թիրզային կամենում են զարթնացնել) Թիրզայ, Թիրզայ . . . ո՞հ, մի կորուստս և մի ցաւս երկու դարձան, վայ ինձ:

## ՄԻՀԱԼԱՅ

Վայ, եղբայր իմ, քո՛յր իմ:

(Վարագոյրը իջնում է)

Վ. երջ.

||. Գնանէ: